ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2499-20 առ "23" 12 2020թ.

Ձեր _____ առ "___" _____ 2020թ.

«ՏՆՄ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն. Մ. Խաչատրյանին
E-mail: deltant@mail.ru

[№01/168 առ 06.07.2020թ. պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Խաչատրան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար առանցքակալների (այսուհետ՝ ապրանք) ձեռք բերման նպատակով ս/թ հունիս 4-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-72/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «ՏՆՄ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. հուլիսի 06-ին կնքվել է թիվ 01/168 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 384000 (երեք հարյուր ութսուն չորս հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 2 հատ առանցքակալները, որոնց ընդհանուր գինը կազմում է 384000 (երեք հարյուր ութսուն չորս հազար) ՀՀ դրամը՝ «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

  ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն միակողմանի լուծում է «ՏՆՄ» ՍՊԸ-ի հետ 2020թ. հուլիսի 06-ին կնքած թիվ 01/168 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60